

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 41/1

ք.Երևան

13 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 17.04.2018թ. թիվ 4100467 ակտի դեմ «ԴՐԱՅՎ-2014» ՍՊԸ-ի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԴՐԱՅՎ-2014» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) տնօրենը հայտնում է, որ ստուգողներն իրենց իրականացրած գործողությունների ընթացքում թույլ են տվել օրենքի մի շարք խախտումներ: Մասնավորապես՝ ստուգումն իրականացնող անձինք ընկերության աշխատակից Երվանդ Մարտիրոսյանին չեն ներկայացրել ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, և հանձնարարագրի մեկ օրինակը չի տրամադրվել նրան: Հանձնարարագրի մեկ օրինակը տրամադրվելու դեպքում կամ աշխատողը պետք է ստորագրեր ստանալու մասին, կամ ստուգողները պետք է նշում կատարեին ստորագրելուց հրաժարվելու մասին (ՀՀ հարկային օրենսգրքի 339 հոդվածի 4.1 և 339 հոդվածի 4.4 կետ): Հանձնարարագրի երկրորդ էջում ստուգողների կողմից կա նշում, որ այդ պահին տնօրենի բացակայելու պատճառով տնօրենը չի ստորագրել: Բայց այդ պահին տնօրենը պարտավոր չէր լինել լցակայանում, և հանձնարարագիրը պետք է տրվեր պատասխանատու աշխատողին, ինչը չի կատարվել: Ըստ 23.03.2018թ. արձանագրության և ակտի նախագծի, գնումը կատարվել է ժամը 23:15-ին, իսկ մոտ տաս րոպե հետո՝ ժամը 23:24-ին, դուրս է բերվել Z հաշվետվությունը: Այսինքն, «խախտման փաստը» ֆիքսվել է 9 րոպե հետո: Որտեղ են եղել այդ ընթացքում ստուգողները: Ինչու անմիջապես չեն ֆիքսել խախտումը (ՀՀ հարկային օրենսգրքի, հոդված 345.5): Ժամանակային այդ խզումը հիմք է տալիս կասկածի տակ դնել գնում կատարելը: Իսկ ինչպես է հիմնավորվում (ինը րոպե հետո) գնում կատարելու փաստը կամ գնման գումարի չափը, երկու հազար դրամի, թե հազար հինգ հարյուրի կամ հինգ հազարի: Աշխատակիցը նույնիսկ չգիտի նրանք կատարել են գնում (լիցքավորում), թե ոչ: Ըստ աշխատակցի, լցակայանում չի կազմվել խախտում թույլ տալու մասին որևէ փաստաթուղթ (Արձանագրություն) և չի ներկայացվել ստորագրման: Հակառակ դեպքում ստուգում իրականացնողները կնշեին ստորագրելուց հրաժարվելու մասին: Այստեղ ևս նշվել է, որ Արձանագրությունը «չստորագրվեց տնօրենի բացակայության պատճառով»: Շարադրվածի մասին ընկերությունը 11.04.2018թ.-ին Ակտի նախագիծը կազմած ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 15 բաժին է

ներկայացրել իր առարկությունները: Առարկությունները չեն ընդունվել: 17 ապրիլի 2018թ. կազմվել և ընկերություն է ուղարկվել թիվ 4100467 Ակտը, առաջարկելով 150.000 դրամ տուգանք:

Հաշվի առնելով շարադրվածը՝ ընկերությունը խնդրում է չեղյալ ճանաչել ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության թիվ 4100467 ստուգման ակտը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 13.03.2018թ. թիվ 4100467 հանձնարարագրի համաձայն «ԴՐԱՅՎ-2014» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 17.04.2018թ. թիվ 4100467 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջարկվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Արման Եղիազարյանի կողմից 23.03.2018թ.-ին ժամը 23:15-ի սահմաններում ք.Չարենցավան, Եսայան 8/10 հասցեում գտնվող «ԴՐԱՅՎ-2014» ՍՊԸ-ի գազա-լցակայանից կատարվեց գնում ընդամենը 2000 դրամ արժեքով 10.811 խմ սեղմված բնական գազի լիցքավորում միավորի գին 185 արժողությամբ, (10.811խմ x 185=2000): 10.811 խմ սեղմված բնական գազի լիցքավորման դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ընկերության լիցքավորող Երվանդ Մարտիրոսյանի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 23:24-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 1150112 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված գնման արժեքը՝ 2000 դրամը, ժամը 23:25-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 23:25-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 1152112 դրամ ընդհանուր գումարով:

Սուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն որոշման N3 հավելվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների 9-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթը, որը նույն հավելվածի 24-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի դրույթների համաձայն դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների խախտում:

Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն առաջարկվում է տուգանք 150000 դրամի չափով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմա-կերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքե-

նայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

«Կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման հավելված N3-ի 4-րդ կետի համաձայն՝ գանձապահը ՀԴՄ օգտագործող է, ով կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտի միջոցով իրականացված գործարքներին վերաբերող՝ սահմանված տեղեկությունները և հաշվարկի կատարման համար անհրաժեշտ տվյալները մուտքագրում է ՀԴՄ, տպում է ՀԴՄ կտրոնը և այն տրամադրում ապրանքներ ձեռք բերողին կամ աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին:

Հավելված N3-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների կամ մասնակի վճարումների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն:

Հավելված N3-ի 24-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում նաև գնված ապրանքի կամ ընդունված աշխատանքի կամ ստացված ծառայության արժեքի (այդ թվում՝ կանխավճարի) չմուտքագրումը կամ դրանց արժեքից ցածր արժեքի (այդ թվում՝ կանխավճարից ցածր կանխավճարի) մուտքագրումը:

«Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ նույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 150 հազար դրամի չափով, բացառությամբ նույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի:

Քննարկվող դեպքում հարկային տեսուչ Արման Եղիազարյանի կողմից 23.03.2018թ.-ին ժամը 23:15-ի սահմաններում ք.Չարենցավան, Եսայան 8/10 հասցեում գտնվող «ԴՐԱՅՎ-2014» ՍՊԸ-ի գազալցակայանից կատարվել է գնում ընդամենը 2000 դրամ արժեքով՝ սեղմված բնական գազի լիցքավորում, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Սակայն ընկերության լիցքավորող Երվանդ Մարտիրոսյանի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք լիցքավորող Երվանդ Մարտիրոսյանին առաջարկել են, որպեսզի ներկայանա ընկերության տնօրենը,

վերջինիս ստուգման հանձնարարագիրը ներկայացվելու համար: Երվանդ Մարտիրոսյանը հեռախոսի միջոցով կապ է հաստատել ընկերության տնօրենի հետ: Այնուհետև հայտնել է, որ ընկերության տնօրենը չի կարող ներկայանալ: Արդյունքում հանձնարարագրի օրինակը ներկայացվել է փոստային ծառայության միջոցով:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդումներին, որ Երվանդ Մարտիրոսյանին չի ներկայացվել հանձնարարագիրը՝ վերջինիս կողմից այն ստորագրվելու համար, ապա հարկ է նշել, որ նման պահանջ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Մասնավորապես՝ Երվանդ Մարտիրոսյանի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց ընկերության տնօրենի փոխարինող ապշտոնատար անձը հանդիսանալու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ՝ ստուգման ընթացքում ձեռք բերված ապացույցներով, հիմնավորվել է ընկերության կողմից Ակտում հիշատակված իրավանորմերի պահանջների խախտման հանգամանքը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 17.04.2018թ. թիվ 4100467 ակտի դեմ «ԴՐԱՅՎ-2014» ՍՊԸ դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ